

ԱՍՏԳԻԿ ԼԵՈՆԻԴԻ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երաժշտագետ, Ա. Սպենդիարյանի տուն թանգարանի գլխավոր ֆոնդայատ

E-mail: astghik.hamtyunian7@gmail.com

Doi:10.58580/18290019-2023.2.65-41

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Գոհար Կառլենի Շագոյանի՝ 12.11.2023 թ.,
ընդունվել է տպագրության՝ 20.11.2023 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 20.10.2023 թ.

«ԱՌԱՋԻՆՆԵՐԻՑ ԱՌԱՋԻՆԸ»

նվիրված Ռոմանոս Մելիքյանի ծննդյան 140-ամյակին

Ամփոփում

Երաժշտահասարակական գործիչ, գորել կազմակերպիչ Ռոմանոս Մելիքյանն ապրեց շատ բուռն կյանք՝ թողնելով անգնահատելի ժառանգություն ապագա սերունդների համար: Դեռևս երիտասարդ տարիքում բուռն երաժշտական գործունեություն ծավալեց իր ծննդավայրում՝ Նոր Նախիջևանում, այնուհետև որպես երաժիշտ կատարելագործվեց և ուսումը շարունակեց Մոսկվայում և Պետերբուրգում, որտեղ էլ առաջին անգամ հանդիպեց իր ավագ ընկերոջը՝ Ալեքսանդր Սպենդիարյանին: Դեռևս երտասարդ և ըմբոստ Ռոմանոսի կողմնակալ վերաբերմունքը Սպենդիարյանի երաժշտության հանդեպ փոխվեց ժամանակի ընթացքում: Հետագայում բարձր գնահատելով Սպենդիարյանի տաղանդն ու երաժշտական ինքնատիպ ձեռագիրը, նրա գաղափարների նորարարական միտումները ժամանակի երաժշտական կյանքում և հատկապես «Ալմաստ» օպերայի նշանակությունը հայ երաժշտության պատմության մեջ, ինչպես նաև այս երկու մեծերի բարեկամական ու մտերիմ շփումները ստիպեցին Ռոմանոսին վերաթմբավորել Սպենդիարյանի դերը հայ երաժշտության ուղեծրում: Հենց Ռոմանոսի միջնորդությամբ Սպենդիարյանը ծանոթացավ ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի հետ և սկսեց գրել իր Կարապի երգը՝ «Ալմաստ» օպերան, իսկ արդեն հայրենի հողում կոնսերվատորիայի նվագախմբի անդամիկ համերգին՝ 1924 թ. դեկտեմբերի 10-ին Ռոմանոս Մելիքյանի կինը Արուս Բաբայանը, կատարեց նաև Սպենդիարյանի ռոմանսները՝ կոմպոզիտորի նվագակցությամբ: Սպենդիարյանի գալուստը հայրենիք և համերգների կազմակերպումը խթանեցին երաժշտական կյանքի ակտիվությունն ու նոր վերելքը, իսկ Ռոմանոսի պրպտուն բնավորությունն ու ոգևորությունն նրան մղեցին նոր երաժշտական կրթօջախի՝ Ստեփանակերտի երաժշտական ուսումնարանի ստեղծմանը (1925 թ.): Որոշ ժամանակ անց հին ընկերները կրկին հանդիպեցին Երևանում, և Սպենդիարյանն առաջարկեց Ռոմանոսին ապրել իր բնակարանում՝ ներկայիս Նալբանդյան 21 հասցեում, որտեղ այժմ Սպենդիարյանի տուն-թանգարանն է: Մեծ եղավ Ռոմանոսի դերը Սպենդիարյանի հիշատակի հավերժացման, կոմպոզիտորի կիսատ թողած գործերի և անկատար երազանքների իրականացման հարցում, հատկապես «Ալմաստ» օպերայի՝ Թիֆլիսի, Օդեսայի և Երևանի պրեմիերաները կյանքի կոչելիս: Ալեքսանդր Սպենդիարյան, Ռոմանոս Մելիքյան, Մարտիրոս Սարյան, Ալեքսանդր Թամանյան և այլք՝ մեծեր, որոնք միայն անուններ չեն, այլ նվիրյալն էին այն գործի ու համոզմունքի, որին լծված էին ծառայելու իրենց անխոնջ ու տքնաջան աշխատանքով՝ կերտելու հայրենիքի նոր շունչ առնող մշակույթը:

Բանալի բառեր. Ռոմանոս Մելիքյան, Ալեքսանդր Սպենդիարյան, «Ալմաստ», Ստեփանակերտի երաժշտական ուսումնարան, Արուս Բաբայան, բարեկամություն, Երևանի կոնսերվատորիա, առաջին սիմֆոնիկ նվագախումբ, Երևանի երաժշտական ստուդիա:

Abstract

Musicologist, Chief Fund Manager of the A. Spendiaryan House Museum Astghik Leonid Harutyunyan. - «“The First of the First” (Dedicated to Romanos Melikyan’s 140th Birth Anniversary)».

Music public figure and powerful organizer Romanos Melikyan lived a very vibrant life, leaving an invaluable legacy for future generations. Even in his youth, he engaged in intense musical activity in his birthplace, New Nakhichevan, and later as a musician, he improved and continued his education in Moscow and St. Petersburg. It was there that he first met his older friend, Alexander Spendiaryan. Initially, the young and rebellious Romanos had a biased attitude toward Spendiaryan’s music, which changed over time. Later, deeply appreciating Spendiaryan’s talent, his unique musical style, his innovative ideas in the musical life of the time, and especially the significance of the opera ‘Almost’ in the history of Armenian music, as well as the close friendship between these two great figures, Romanos reevaluated Spendiaryan’s role in Armenian music. It was through Romanos’s mediation that Spendiaryan met the great Armenian poet Hovhannes Tumanyan and began composing his Swan Song, the opera ‘Almost’. During the debut concert of the conservatory’s orchestra in their homeland on December 10, 1924, Romanos Melikyan’s wife, Arus Babalyan, performed Spendiaryan’s romances with the composer accompanying her. Spendiaryan’s arrival in the homeland and the organization of concerts boosted the activity and revival of musical life, while Romanos’s inquisitive and enthusiastic nature pushed him to establish a new musical institution, the Stepanakert Music School (1925). Some time later, the old friends met again in Yerevan, and Spendiaryan invited Romanos to live in his apartment at the current address of Nalbandyan 21, where the Spendiaryan House Museum is now located. Romanos played a significant role in immortalizing Spendiaryan’s memory, realizing the composer’s unfinished works and unrealized dreams, particularly in bringing to life the premieres of the opera ‘Almost’

Նվիրվում է Ռ.Մելիքյանի ծննդյան 140-ամյակին

in Tbilisi, Odessa, and Yerevan. Alexander Spendaiyan, Romanos Melikyan, Martiros Satyan, Alexander Tamanian, and others were not just names; they were dedicated individuals committed to the mission and belief in creating the new, revitalizing culture of their homeland with their tireless and devoted efforts.

Key Words: Romanos Melikyan, Alexander Spendiatyan, "Almast", Stepanakert Music School, Arus Babalyan, friendship, Yerevan Consermtioy, first symphonic orchestra, Yerevan Music Studio.

Աբստրակ

Музыковед, Главный хранитель фондов Дома-музея Спендиаряна Астхик Леонидовна Арутюнян. - "Первый из первых" (к 140-летию со дня рождения Романоса Меликяна).

Романос Меликян — музыкальный общественный деятель, выдающийся организатор — прожил очень бурную жизнь, оставив бесценное наследие будущим поколениям. В юном возрасте он вел активную музыкальную деятельность на родине, в Нор-Нахичевани, затем совершенствовался как музыкант и продолжил обучение в Москве и Петербурге, где впервые встретил своего старшего друга Александра Спендиаряна. Отношение еще молодого и мятежного Романоса к музыке Спендиаряна со временем изменилось. Позднее, высоко оценив талант и оригинальный музыкальный почерк Спендиаряна, новаторские тенденции его идей в музыкальной жизни того времени и особенно значение оперы «Алмаст» в истории армянской музыки, а также дружеские и тесные контакты заставили Романа переоценить роль Спендиаряна в орбите армянской музыки. Именно при посредничестве Романоса Спендиарян познакомился с армянским поэтом Ованесом Туманяном и начал писать свою лебединую песню, оперу «Алмаст». Уже на первом концерте оркестра консерватории на родной земле 10 декабря 1924 года жена Романоса Меликяна — Арус Бабалян исполнила романсы Спендиаряна в сопровождении композитора. Приезд Спендиаряна на родину и организация концертов стимулировали активность и новый подъем музыкальной жизни, а энергичный характер и энтузиазм Романоса подтолкнули его к созданию нового музыкального учебного заведения - Степанакертского музыкального училища (1925). Через некоторое время старые друзья снова встретились в Ереване, и Спендиарян предложил Романову поселиться в своей квартире на улице Налбандяна, 21, где сейчас находится Дом-музей Спендиаряна. Романос Меликян сыграл большую роль в увековечивании памяти Спендиаряна, в реализации незавершенных произведений и несбывшихся мечтаний композитора, особенно в воплощении в жизнь премьер оперы «Алмаст» в Тифлисе, Одессе и Ереване. Александр Спендиарян, Романос Меликян, Мартирос Сарьян, Александр Таманян — это не просто имена, но преданные делу деятели искусства, которые верили, что они обязаны своим неустанным и упорным трудом послужить созданию новой зарождающейся армянской культуры.

Ключевые слова: Романос Меликян, Александр Спендиарян, «Алмаст», Степанакертская музыкальная школа, Арус Бабалян, дружба, Ереванская консерватория, первый симфонический оркестр, Ереванская музыкальная студия.

Ռոմանոս Մելիքյան կոմպոզիտորի, արվեստագետի ու կազմակերպչի մասին կան մի շարք աշխատություններ, որոնցից են երաժշտագետ Գևորգ Գյոդակյանի «Ռոմանոս Մելիքյան» մենագրությունը, Խորեն Թորքյանի «Ռոմանոս Մելիքյան», Քնարիկ Գրիգորյանի «Ռոմանոս Մելիքյան. - հոդվածներ, նամակներ, հուշեր» աշխատությունը, մի շարք հոդվածներ և ուսումնասիրություններ, զեկոլյցներ: Այդ բոլոր ուսումնասիրություններում մանրարկրկիտ ներկայացված է կոմպոզիտորի թե՛ կյանքը, թե՛ ստեղծագործական ժառանգությունը, այդ իսկ պատճառով մենք նպատակ չունենք այն ևս մեկ անգամ ներկայացնելու, այլ այս ակնարկը հակիրճ անդրադարձ է կոմպոզիտորի կյանքի ուղուն, մասնավորապես Ռոմանոս Մելիքյանի ու Ալեքսանդր Սպենդիարյանի հանդիպմանը և դրանից ծնված ընկերությանն ու բարեկամությանը:

Ռոմանոս Մելիքյանն ապրեց շատ բուռն ու վայրիվերումներով հագեցած կյանք՝ թողնելով անգնահատելի ժառանգություն ապագա սերունդների համար: Երաժշտության մեծ նվիրյալը միշտ պայքարում էր հանուն այն գործի ու գաղափարների, որոնք իր համար բացարձակ ճշմարիտ էին և հրատապ: Չվատնելով իր ապրած ոչ մի վայրկյանը՝ նա ամեն րոպե գգում և ապրում էր կյանքի յուրաքանչյուր պրպտելով և արարելով այն նոր անելիքները, որոնք ժամանակի հրամայականն էին: Մելիքյանը գորեղ կազմակերպիչ էր, նախաձեռնող, և ոչ մի դժվարություն չէր կարող խոչընդոտ դառնալ իր վերջնական նպատակին հասնելու համար: Դեռևս 17 տարեկանում Ռոմանոսը կազմա-

կերպեց իր անդրանիկ երգչախումբը և, համերգներ տալով հայրենի Ղզլարում, սկսեց իր երաժշտական գործունեությունը: Նոր Նախիջևանի թեմական դպրոցում, որտեղ սովորում էր, Ռոմանոսն ուներ երգչախումբ: Այն ղեկավարում էր կաթողիկոս Գևորգ Չորեքյանը: Կարճ ժամանակ անց Ռոմանոսն արժանացավ իր ուսուցչի ուշադրությանը և նրա հետ միասին սկսեց ղեկավարել երգչախումբը: Ռոմանոսը զուգահեռաբար նշանակվեց Սուրբ Գևորգ եկեղեցու երգչախմբի ղեկավար: Շուտով Ռոմանոսն ընդունվեց Ռոստոմի երաժշտական ուսումնարանը, այնուհետև ուսման մեկնեց Մոսկվա և անմիջապես դարձավ Լազարյան ճեմարանի երգչախմբի ղեկավարը: Մոսկվայում սկսեց մասնավոր դասեր ստանալ Մ. Մ. Իպոլիտով-Բովանովի և Բ. Յավորսկու մոտ՝ հույս ունենալով ընդունվել կոնսերվատորիա, սակայն Ռոմանոսին չհաջողեց դա: Այդ նույն տարում կոմպոզիտոր Ս. Բ. Տանենի ջանքերով Մոսկվայում բացվեց ժողովրդական կոնսերվատորիան: Չնայած դիմորդների մեծ թվին՝ Ռոմանոս Մելիքյանն ընդունվեց ժողովրդական կոնսերվատորիա՝ Բ. Յավորսկու դասարան: Նա կլանում էր քաղաքի մշակութային կյանքի ամբողջ եռուզեռը և իր երգչախմբի կազմակերպած համերգներով հանդես գալիս լավագույն համերգաւրահներում: Այդ տարիներին Ռոմանոսը մեծ ուշադրություն էր դարձնում հայկական երգերի մշակմանը: Նա մշակեց «Վարդ կոշիկա», «Արազը հեշտացել է», «Գնաց գարուն», «Մանիք, մանիք» և այլ ժողովրդական երգեր: Մակայն շուտով՝ 1905 թ. հեղափոխության պարտությունից հետո տիրող անկումնային մթնոլորտն ազդեց

ԿՈՄՊՈԶԻՏՈՐ, ՀԱՍՏԱԿԱԿՄԱՆ ԳՈՐԾԲԶԷ-ՊԻՆԱԿԱԿԱՐ

Նվիրվում է Ռ.Մելիքյանի ծննդյան 140-ամյակին

ոչ միայն քաղաքի կյանքի, այլ նաև Ռոմանոսի վրա. նրա ստեղծագործություններում ակնհայտ դարձան միայնության և հիասթափության տրամադրությունները: Առողջական լուրջ խնդիրներն ու ֆինանսական ծանր վիճակը նրան ստիպեցին կիսատ թողնել ուսումնառումը և վերադառնալ հայրենի Նոր Նախիջևան: Սակայն նրա անհանգիստ էությունը երկար չկարողացավ մնալ առանց նոր ձեռնարկի:

1908 թ. Ռոմանոսը մեկնեց Թիֆլիս: Տեղում կազմակերպեց «Երաժշտական լիգա»-ն՝ հայ երաժիշտների ստեղծագործական առաջին միավորումներից մեկը, որի հիման վրա էլ 1912 թ. ստեղծվեց «Թիֆլիսի հայոց երաժշտական ընկերությունը»: Չնայած ակտիվ կազմակերպչական և ստեղծագործական գործունեությանը՝ Ռոմանոսը մտահոգ էր իր մասնագիտական վարպետությունը կատարելագործելու և թերի թողած ուսումնառումը ավարտին հասցնելու համար: Այդ ժամանակ ծնվեցին Վահան Տերյանի խոսքերով գրված «Աշնան երգ» ռոմանսը և «Մոնետ» մելոդիկամանգին: 1908 թ. «Աշնան երգ» ռոմանսը դարձավ Ռոմանոսի առաջին տպագիր ստեղծագործությունը:

Նոր գիտելիքներով զինվելու ձգտումն ստիպեց Ռոմանոսին 1910 թ. մեկնել Պետերբուրգ: Դավիթ Սողոմոնյանին ուղարկած նամակներից մեկում գրում է. «Այս ձմեռ ուզում եմ անցնել հյուսիս, ինչպես էլ լինի, թեկուզ և քաղցած, բայց և այնպես իմ կատարելագործվելու-սովորելու կարևոր է» (1.):

Ա. Կ. Գլազունովի միջնորդությամբ ընդունվելով կոնսերվատորիա՝ Ռոմանոսը Մելիքյանը, չնայած նյութական դժվարություններին, մեծ եռանդով լծվում է ուսանելու՝ ժամանակի ակնավոր երաժիշտների մոտ. Մ. Շոենբերգ (գործիքավորման դասարան), պրոֆեսոր Վ. Պ. Կալաֆատի (պոլիֆոնիայի դասարան), պրոֆեսոր Ն. Ֆ. Սոլովյով (ազատ ստեղծագործության դասարան): Հետագայում Ա. Կ. Գլազունովի միջնորդությամբ Ռ. Մելիքյանը ձեռք է բերում Հայոց եկեղեցու խմբավարի պաշտոնը, ինչն էլ բավական բարելավում է կոմպոզիտորի նյութական ծանր վիճակը: Պետերբուրգում նույնպես Ռոմանոսը բուռն ստեղծագործական կյանքով էր ապրում: Հայագրի մտավորականների և երաժիշտների հետ հաճախ էր քննարկում հայ երաժշտության և արվեստի ներկայի և ապագայի հարցերը, անելիքները և իրատեսական լուծումները, որոնք ուղիներ պետք է հարթեին հայկական մշակույթը նոր ճանապարհով տանելու գործում: Այդ ժամանակ էր, որ կայացավ ուսանող Ռոմանոս Մելիքյանի ու արդեն մեծ համբավ ունեցող կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի առաջին հանդիպումը:

Ռ. Մելիքյանն իր հուշերում գրում է. «Նրան ես գտա խիստ մտահոգ: Բաքվից պատվեր էր ստացել Խաչատուր Աբովյանի հիշատակին կանտատ գրել: Այդ աշխատանքին նա մեծ նշանակություն էր տալիս և հանձին ինձ տեսնելով հոգեհարազատ մարդու, նա հուզմունքով սկսեց ցույց տալ «Աղասու գերեզման»-ի պարտիտուրը» (2. էջ 89.): (Օպ. 21, 1911-1914 թթ. այս ստեղծագործության անվանումը Սպենդիարյանը բազմիցս փոփոխել է, և վերջին խմբագրության մեջ այն մտել է «Այնտեղ, այնտեղ, դեպ վեհ այն դաշտը» անվանումով):

Սակայն այդ ժամանակ գրված Ռոմանոսի նամակներից մեկում՝ ուղղված Դավիթ Սողոմոնյանին, տեսնում ենք երիտասարդ և ըմբոստ, սեփական կարծիքն ու համոզմունքներն ունեցող Մելիքյանի սուր քննադատությունը Սպենդիարյանի նոր ստեղծագործության՝ «Ղրիմյան Էսքիզների» 2-րդ սերիայի մասին: Ռոմանոս Մելիքյանը գտնում էր, որ «Էսքիզները 10 քայլ հետադիմություն է «Երեք արմավենիից» հետո, քանի որ նրանում չկա էքսպրեսիա և այն երաժշտական գունապնակը, որը բնորոշ է արևելքին: Սակայն Ռոմանոսի՝ նման սուր և քննադատական կարծիքը փոխվեց ժամանակի ընթացքում: Հետագայում բարձր գնահատելով Սպենդիարյանի տաղանդն ու երաժշտական ինքնատիպ ձեռագիրը, նրա գաղափարների նորարարական միտումները ժամանակի երաժշտական կյանքում և հատկապես «Ալմաստ» օպերայի նշանակությունը հայ երաժշտության պատմության մեջ, ինչպես նաև այս երկու մեծերի բարեկամական ու մտերիմ շփումները ստիպեցին Ռոմանոս Մելիքյանին վերաբերվելով Ալեքսանդր Սպենդիարյանի դերը հայ երաժշտության ուղեծրում:

1915 թ. թողնելով Պետերբուրգը՝ Ռոմանոսը վերադառնում է Թիֆլիս և կապվում դեռևս 1912 թ. Սպիրիդոն Մելիքյանի նախաձեռնությամբ ստեղծված «Հայոց երաժշտական ընկերության» հետ և սկսում ակտիվ մասնակցություն ցուցաբերել ընկերության աշխատանքներին: Ռոմանոս Մելիքյանն սկսեց ակտիվ նամակագրություն ունենալ «Թատրոն և երաժշտություն» ամսագրի ղեկավար Անտոն Մախյանի հետ և այդ հանդեսում տպագրեց մի լայնածավալ հոդված Մակար Եկմայանի մասին՝ բարձր գնահատելով նրա ստեղծագործությունները: Փոխվեց նրա սուր ու կտրուկ գնահատականն ու ընկալումը Կոմիտասի երաժշտության հանդեպ: Նա բարձր էր գնահատում Կոմիտասին՝ նրան համարելով փայլուն ներշնչանքի և տաղանդի տեր երաժիշտ: 1916 թ. գարնանը Ռ. Մելիքյանն ու Ա. Սպենդիարյանը կրկին հանդիպում են Թիֆլիսում, ուր Սպենդիարյանը ժամանել էր Հայկական երաժշտական ընկերության հրավերով՝ հեղինակային համերգ կազմակերպելու համար: Ռ. Մելիքյանն անմիջապես ներգրավում է Ա. Սպենդիարյանին իր միջավայր և ամենազրկավորը՝ ծանոթացնում Հովհաննես Թումանյանի հետ: Կարելի է ասել, որ Ռ. Մելիքյանի այս միջամտությունը բախտորոշ եղավ Ա. Սպենդիարյանի կյանքում, ով երկար ժամանակ փնտրտուքների մեջ էր և սյուժե էր որոնում օպերա գրելու համար:

Ռ. Մելիքյանն Ա. Սպենդիարյանի հետ շրջում էր ամենուրեք: Նրանք հյուրընկալվում էին տեղի մի քանի հայկական դպրոցներում, որտեղ մեծ խանդավառությամբ և ծաղկեփնջերով էին դիմավորում Ա. Սպենդիարյանին: Ռ. Մելիքյանն իր հուշերում պատմում է. «...Համերգների փորձերին նրա սիրտը նեղություն էր պատճառում: Վախենալով, որ սրտի նոպա կարող էր պատահել նրան, ես զանազան դեղեր էի պահում զրբպանումս, որովհետև նա իր ցրվածության պատճառով վաղուց արդեն կորցրած կլինեք...» (3. էջ 120):

Երկու երաժիշտների զորեղ տաղանդն ու կազմակերպչական հմուտ ձիրքն ավելի վաղ դրսևորվեցին հայրենի հողում՝ շնչելով և զգալով մայր բնության ու հողի, օդի ու ջրի, մարդկանց ու կենցաղի կենարար ուժը:

ԿՈՄՊՈԶԻՏՈՐ, ՀԱՄԱՐԱԿԱՆԱԿՆԵՐ ԳՈՐԾԻՉԸ-ՂԻՄԱՆԿԱՐ

Եղիշե Չարենցի հրավերով Ռոմանոս Մելիքյանը 1921 թ. եկավ Երևան և դժվարին պայմաններում ձեռնամուխ եղավ ստեղծելու երաժշտական ստուդիան, որի հիման վրա 1923 թ. բացվեց Կոմսերվատորիան, որի առաջին ռեկտոր նշանակվեց Ռոմանոս Մելիքյանը:

1924 թ. Հայրենիք ժամանեց նաև Ա. Սպենդիարյանը: Երգչուհի Արուս Բաբայանը՝ Ռոմանոս Մելիքյանի կինը, իր հուշերում գրում է. «Քաղաքի երաժշտական հասարակությունը մեծ անհամբերությամբ էր սպասում նրա ժամանմանը, իսկ Ռոմանոսն ու ես կրկնակի ուրախության մեջ էինք: Մեր ղեկավարի՝ լուսավորության ժողովուրդ Աստվածատու Մոսկվայի առաջարկությամբ պետք է կայարաւում կազմակերպեինք Ալեքսանդր Աֆանասիչի հանդիպումը... Ռոմանոսն առաջ էլ հանդիպել էր Ալեքսանդր Աֆանասիչին և նույնիսկ նրան հյուր էր եղել Սուդակում, իսկ ինձ համար այդ հանդիպումն առաջինն էր լինելու» (4. էջ 37): Ի դեպ Արուս Բաբայանի այս հուշերում հիշատակված փաստը միակ վկայությունն է, որ Ռոմանոս Մելիքյանը հյուրընկալվել է Սպենդիարյանների Սուդակի ամառանոցում:

Շուտով կոմսերվատորիայի կադրերի՝ ուսանողների և դասախոսների ուժերով Սպենդիարյանը կազմակերպեց փոքրիկ նվագախումբ, որի անդրանիկ համերգը կայացավ նույն տարվա դեկտեմբերի 10-ին: Առաջին անգամ հայրենի հողում տեղի ունեցավ մեծ կոմպոզիտորի ստեղծագործություններից կազմված հեղինակային համերգը: Համերգին էլույթ ունցավ նաև Արուս Բաբայանը՝ կատարելով Սպենդիարյանի ռոմանսները՝ կոմպոզիտորի նվագակցությամբ:

«Սպենդիարյանը սիրում էր լինել մեր տանը և գրուցել Ռոմանոսի հետ, - հիշում էր Արուս Բաբայանը, - Իսկ երբ Ռոմանոսը տանը չէր լինում, մենք թերթում էինք Ալեքսանդր Աֆանասիչի ստեղծագործությունները, ինչպես նաև Ռոմանոսի չհրատարակված գործերը: ...Մի անգամ այդպիսի մի պահի, նա ասաց, որ ես կոմպոզիտորի համար հրաշալի օգնական եմ, ու հարցրեց, թե չե՞մ փորձել արդյոք երաժշտություն հորինել: Չէի կարող թաքցնել նրանից իմ այդ «մեղքը» և նրա խնդրանքով, նվագեցի իմ մանրակտավ երկերը: Երբ դրանց մասին նա դրականորեն արտահայտվեց, խոստովանեցի, որ դրանք կցանկանայի լսել նվագախմբային հնչյունավորմամբ, սակայն ինձ հասուն չհամարելով ձեռնպահ եմ մնացել գործիքավորելու մտքից: Լսելով այդ նա անմիջապես առաջարկեց իր օգնությունը, և մենք սկսեցինք պարապմունքները, որոնք անցնում էին մեր տանը» (5. 4. էջ 39):

Սպենդիարյանի գալուստը Հայրենիք և համերգների կազմակերպումը խթանեց երաժշտական կյանքի ակտիվությունն ու նոր վերելքը, իսկ Ռոմանոսի պրպտուն բնավորությունն ու ոգևորությունն նրան մղեցին նոր երաժշտական կրթօջախի՝ Ստեփանակերտի երաժշտական ուսումնարանի ստեղծմանը (1925 թ.): Որոշ ժամանակ անց հին ընկերները կրկին հանդիպեցին Երևանում, և նրանց մտերմությունն այնքան ամրապնդվեց, որ Ա. Սպենդիարյանն առաջարկեց Ռ. Մելիքյանին ապրել իր հետ:

Ռոմանոսն հիշում է. «Մենք շատ համերաշխ էինք ապրում. Ալեքսանդր Աֆանասիչը շատ վաղ էր արթնանում և ինքն էլ թեյ էր պատրաստում: Այնուհետև զարթնեցնում էր ինձ: Այդ թեյով էլ ըստ էության, սահմանափակվում էր մեր տնային տնտեսությունը: Թեյից հետո մենք նստում էինք գործիքի մոտ: Սպենդիարյանն ուշիուշով ուսումնասիրում էր Կոմիտասի երկերը: Ծանոթանում էր շարականներին: Ես ձայնակցում էի նրան, նույնը նվագելով դաշնամուրի վրա: Ես հետաքրքրվում էր իմ անձնական ձայնագրություններով ու մշակումներով: Այսպես մտերմորեն դիմավորեցինք 1928 թ.: ...Այդ ժամանակ տեղի դիվիզիայի քաղաքաժնից նրան պատվիրեցին կարմիր բանակային երգեր և քայլերգեր գրել: ...Բայց նրա խառնվածքն ամենից սակավ մարտական էր: Այդ պատվերն այնպես էր տանջում նրան, որ նույնիսկ չգիտեր, թե ինչպես ձեռնամուխ լինել այդ գործին: Տեսնելով, թե ինչպես է նյարդայանում, ես փորձեցի օգնել նրան:

- Այ դա շատ լավ է: Ես ձեզ եմ վերահանձնարարում ինձ տրված ամբողջ պատվերը» (2. էջ 92, 5.):

Ռոմանոս Մելիքյանը շուտով մեկնում է Թիֆլիս և այնտեղ գրում կարմիր բանակային երգերի և քայլերգերի մի ժողովածու՝ նպատակ ունենալով ուրախացնել վարպետին և նրան ներկայացնել կատարած աշխատանքը: Արուս Բաբայանը հիշատակում է նաև, որ Ռոմանոս Մելիքյանն ու Ալեքսանդր Սպենդիարյանն երկուսով մտորում էին գրել «Քաջ Նազար» օպերան, որի լիբրետտոն Սպենդիարյանը հանձնարարել էր գրել Արուս Բաբայանին, իսկ վերջինս մեծ ուրախությամբ սկսել էր աշխատանքները:

«1928 թ. գարնան սկզբին Ռոմանոսը եկավ տուն, Թիֆլիս՝ հանգստի: ...Բոլորովին անսպասելի նրան Երևան կանչեցին: Մեկնումից առաջ նա ցանկություն հայտնեց իր հետ վերցնել օպերայի լիբրետտոն՝ Ալեքսանդր Աֆանասիչին ցույց տալու համար: Չկարողացա մերժել նրա խնդրանքը, և լիբրետտոյի սևագիրը՝ միակ և դեռևս անմշակ տարբերակը, նա իր հետ Երևան տարավ: Վերադառնալով Թիֆլիս՝ Ռոմանոսն ինձ հաղորդեց, որ Սպենդիարյանը ծանոթանալով լիբրետտոյին, հավանել էր այն և խնդրել իր մոտ թողնել՝ ավելի հանգամանալից ծանոթանալու համար: Ռոմանոսի վերադառնալուց շատ ժամանակ չէր անցել, երբ մեզ հաղորդեցին սոսկալի լուրը՝ դադարել էր բաբայանուց մեծ մարդասերի սիրտը» (4. էջ 37.):

Ջութակահար Հակոբ Խանջյանը հիշում է. «1928 թ. մայիսն էր Երևանում: Քաղաքի բոլոր տներում մնացել էին ծծկեր երեխաները և անդամալույծները: Բոլորը, բոլորը, ով ոտքի վրա էր, եկել էին վերջին հրաժեշտը տալու մեծ երաժիշտ-քաղաքացուն: Ծաղիկների մեջ կորսված դագաղը տանում էին Աբովյանով: Հուղարկավորների առջևից դանդաղ, վշտահար, ոտքից գլուխ ճերմակ հագած գնում էր Ռոմանոս Մելիքյանը...» (5. էջ 38.):

Մեծ եղավ Ռ. Մելիքյանի դերը Ա. Սպենդիարյանի հիշատակի հավերժացման, կոմպոզիտորի կիսատ թողած գործերի և անկատար երազանքների իրականացման

Նվիրվում է Ռ. Մելիքյանի ծննդյան 140-ամյակին

հարցում: Ա. Ա. Սպենդիարյանի մահից հետո ստեղծվում է նրա ձեռագրերի ուսումնասիրման հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում է նաև Ռ. Մելիքյանը: Ա. Սպենդիարյանի գործերը տնօրինող կազմում էին նաև երաժշտագետներ Վասիլ Դորդանյանը, Օլսաննա Տեր-Գրիգորյանը, ինչպես նաև Ալեքսանդր Թամանյանը, Մարտիրոս Մարյանը: Նրանց նախաձեռնությամբ Հայպետհրատը լույս ընծայեց Սպենդիարյանի նվագախմբային մի շարք գործեր: Հանձնաժողովը կարգի բերեց Ա. Սպենդիարյանի բոլոր ձեռագիրը և հրատարակված գործերը: Սակայն առաջնային խնդիրը մնում էր «Ալմաստ» օպերայի գործիքավորումը, որը կոմպոզիտորը չէր հասցրել վերջացնել: Այդ պատասխանատու գործը հանձնարարվեց Մաքսիմիլյան Շտեյնբերգին: Հաջորդ քայլը օպերայի բեմադրությունն էր: Անդրանիկ բեմելը եղավ Մոսկվայի Մեծ թատրոնի ֆիլիալում, քանի որ Երևանը դեռևս չունեի անհրաժեշտ ներուժ այն իրականացնելու համար:

Այնուհետև 1930 թ. Օդեսայի Պետական օպերան նախաձեռնեց «Ալմաստ»-ի բեմադրությունը, որի կազմակերպման համար Օդեսա գործուղման մեկնեցին Մ. Մարյանը և Ռ. Մելիքյանը:

«Ալմաստ»-ի երրորդ բեմադրությունը տեղի ունեցավ 1932 թ. մայիսի 21-ին Թիֆլիսում: Ռ. Մելիքյանին կրկին վիճակված էր տարվող աշխատանքներում լինել խորհրդատու: Այդ բեմադրության համար Ռոմանոս Մելիքյանը միջնորդեց Երևանից հրավիրել բալետմայստեր Վահրամ Արիստակեսյանին, ով էլ իրականացրեց պարերի բեմադրությունը: Վերջապես 1933 թ. հունվարի 20-ին օպերան բեմադրվեց նաև Երևանում: Ռ. Մելիքյանն իր հուշերում գրում է. «...Մեր առաջին օպերային ներկայացումը մենք վերածեցինք երաժշտական մեծ տոնի» (2. էջ 95): Ռոմանոսին էր վիճակված դառնալու նաև օպերային թատրոնի առաջին գեղարվեստական ղեկավարը:

Ալեքսանդր Սպենդիարյան, Ռոմանոս Մելիքյան, Մարտիրոս Մարյան, Ալեքսանդր Թամանյան և այլք՝ մեծեր, որոնք միայն անուններ չեն, այլ նվիրյալն էին այն գործի ու համոզմունքի, որին լծված էին ծառայելու իրենց անխոնջ ու տքնաջան աշխատանքով՝ կերտելու հայերենի նոր շունչ առնող մշակույթը: Առաջավորներ, որոնք քարքարոտ ուղիներ հարթելով՝ նոր և լուսավոր ճանապարհի բացեցին գալիք սերունդների համար՝ սահմանելով բարձրագույն նշաձող: Ռոմանոս Մելիքյանն այն մարդն էր, ով մեծ ուշադրություն էր դարձնում երիտասարդ սերնդի դաստիարակությանը և նպաստում դրան, իր ուժերի ներածին չափով օգնում և աջակցում էր տաղանդավոր երաժիշտներին:

Ռոմանոս Մելիքյանը դարձավ ազգային դասական ուսմանսի հիմնադիրը՝ նոր շունչ և գեղարվեստական բարձր արժեք հաղորդելով այդ ժանրին: Ռոմանոսներում նա անդրադարձավ հայ պոետների բանաստեղծություններին՝ Թումանյան, Իսահակյան, Տերյան, դրանով իսկ շեշտելով ազգային երգի ու պոեզիայի փոխադարձ կապն ու նրա ակունքներից բխող մաքրությունը: Ռոմանոսի ստեղծագործական պրպտումների ամբողջական գունապնակն իր արտահայտությունը գտավ «Աշնան տողեր», «Զմրուխտի» և «Ձառ-վառ» վոկալ շարքերում, որոնք, անխոս, մեր հայ վոկալ երաժշտության անգին գոհարներից են:

Ստեփան Զորյանի բնութագրող խոսքը Ռոմանոսի մասին թերևս լավագույնս պատկերում է Ռոմանոս մարդուն և արվեստագետին. «...Առաջին տպավորությունը, որ ստանում էինք Ռոմանոսից, այն էր, որ այդ մարդն արտիստ է, բառի ամենալայն և ամենալավ մտքով... Մյուս տպավորությունը, որ ստանում էինք Ռոմանոսից, այն էր, որ նա իր գործի, իր արվեստի էնտուզիաստն էր, և ամեն բանում, ոչ միայն իր արվեստում, այլև շրջապատում փնտրում էր ներդաշնակություն-հարմոնիա» (2.) :

1921 թ. դեկտեմբերի 22-ին երաժշտական ստուդիայի բացման ժամանակ Ռոմանոսը աշակերտներին դիմեց այս խոսքերով. «Արվեստը հազարան բլբուլ է, որ թառած է բարձր ժայռի կատարին: Դժվարին է ճամփան դեպի հազարան բլբուլը՝ նեղ են արահետները, պոկվում, թափվում են քարերը ճամփաներին, սայթաքում արյունոտվում են ոտքերը, ոմանք ընկնում են կես ճանապարհին, ոմանք մոլորվում, կորցնում են ուղին, ոմանք ետ դառնում կեսից... երջանիկ է նա ով հաղթահարում է բոլոր խոչընդոտներն ու հասնում կատարին, հասնում հազարան բլբուլին» (2.): Զրնկրկեց ու չերկմտեց Ռոմանոս Մելիքյանն այդ դժվարին և քարքարոտ ուղին անցնելիս, հավատարիմ մնաց իր որդեգրած սկզբունքներին, ամենայն պատասխանատվությամբ և եռանդով անցավ այդ դժվարին ճանապարհը՝ դառնալով Առաջիններից Առաջինը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դ. Սողոմոնյանի նամակը, 1910 թ: Մելիքյանի արխիվ:
2. /Ժամանակակիցները Ա. Սպենդիարյանի մասին, Եր., Հայպետհրատ, 1960 թ.:
3. Գյոդակյան Գ. Շ., Ռոմանոս Մելիքյան, Եր., ՀՄՄՌ ԳԱԱ հրատ., 1960 թ.:
4. Ա. Բաբայան, «Միշտ զգայուն և ուշադիր», Հուշեր, Եր., Էդիթ պրինտ, 2012 թ.:
5. Հ. Խանջյան, «Երբ սկսվում էր... նոր սկիզբը», Հուշեր, Եր., Էդիթ պրինտ, 2012 թ.:

REFERENSES

1. D. Soghomonjani namak', 1910 th: Meliqyani arkhiv.
2. /Zhamanakakitzner' A.Spendiaryani masin, Yer., Haypethrat, 1960 th.
3. Gyodakyan G. Sh., Romanos Meliqyan, Yer., HSSR GAA hrat., 1960 th.
4. A. Babalyan, "Misht zgayun ev ushadir", Husher, Yer., Edith print, 2012 th.
5. H. Khanjyan, "Yerb sksvum er... nor skizb", Husher, Yer., Edith print, 2012 th.

Հեղինակի մասին. ԱՍՏԳԻԿ ԼԵՈՆԻԴԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (ծ. 18.06.1983 թ. ք. Գյումրի): Ավարտել է 2005-ին Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի երաժշտագիտական բաժինը, 2009-ին՝ ԵՊԿ սափրատուրայի երաժշտագիտության բաժինը պրոֆեսոր Ա. Ա. Սարյանի ղեկավարությամբ: Աշխատել է 2005-ից՝ Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարանում, որպես ցուցադրությունների և հանրահռչակման բաժնի վարիչ, այնուհետև ավագ գիտաշխատող, 2009-ից՝ մինչ օրս, որպես գլխավոր ֆոնդայապահ: Աշխատանքային տարիների ընթացքում թանգարանում կազմակերպել են ցուցադրություններ՝ «Գևորգ Բուդաղյան 110», «Սպենդիարյանը ժամանակակիցների հուշերում», «Եկատերինյան փողոց N 3 տուն» խորագրերով: Կազմակերպել է միջոցառումներ, կրթական ծրագրեր, համերգ-դասախոսություններ, հանդես եկել տարբեր գիտաժողովներում՝ ներկայացնելով երաժշտագիտական զեկուցումներ և ուսումնասիրություններ՝ մասնավորապես Սպենդիարյանի և իր ժամանակակիցների կյանքին և ստեղծագործական ուղղուն առնչվող: Մասնագիտական Մամուլում՝ մասնավորապես //«Երաժշտական Հայաստան» ամսագրում ներկայացրել է հետևյալ հոդվածները՝ «Երկու մեծերի հանդիպումը» (նվիրված Ա. Խաչատրյանին), «Գևորգ Բուդաղյան - 110» (նվիրված Գ. Բուդաղյանի ծննդյան 110 ամյակին): //«Երաժիշտ» ամսաթերթում տպագրվել են հոդվածներ հետևյալ խորագրերով՝ «Թումանյանական քնարերգությամբ ներշնչված հայ կոմպոզիտորների օպերաները, Ալեքսանդր Սպենդիարյան «Այմաստ», «Վարդան Աճեմյան «Կիկոսի մահը», «Պատկերայնությունը Սպենդիարյանի ստեղծագործություններում» և այլն, ինչպես նաև մի շարք հոդվածներ, որոնք յուսաբանում են թանգարանի գործունեությունը: Տպագրված հոդվածներ //«Ակտուալ արվեստ» հանդեսում: 2021թ ղեկավարել է 14-16 մասնակցով է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի, Սպենդիարյանի տուն-թանգարանի և Հայաստանի կոմպոզիտորների միության համատեղ կազմակերպած «Սպենդիարյան-150» խորագրով գիտական նստաշրջանին՝ ներկայացնելով «Դիրիժորական փայտիկի կախարհի ուժը» խորագրով գիտական զեկույցը՝ նվիրված Սպենդիարյանի դիրիժորական գործունեությանը: Այն տպագրվել է նաև ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կողմից կազմած կոնֆերանսի հոդվածաշարում: 2022 թ. կազմել է երկլեզու (հայերեն, անգլերեն) ձայնակավառնակով ժողովածուն՝ «Ալեքսանդր Սպենդիարյան. Պատկերագիր» վերնագրով: Աշխատանքի ընթացքում մասնակցել է տարրաբնույթ վերապատրաստումների, որոնք առնչվել են թանգարանային ոլորտի հիմնություններին և ստացել մասնագիտական հավաստագրեր: 2017 թ. ՀՀ մշակույթի նախարարության կողմից արժանացել է Պատվոգրի երկարամյա աշխատանքային գործունեության համար:

About the author: ASTGHIK LEONID HARUTYUNYAN (born 18.06.1983, in Gyumri) graduated from the Musicology Department of Yerevan Komitas State Conservatory in 2005 and in 2009 completed the postgraduate program in musicology at the same Institution (Supervisor: Professor A. A. Saryan). Since 2005, she has worked at the Alexander Spendiaryan House-Museum, first as the Head of Exhibitions and Promotion Department and then as a Senior Researcher. Since 2009, she has been the museum's Chief Fund Manager. During her years at the museum, she has organized exhibitions titled "Gevorg Budaghyan 110", "Spendiaryan in the Memories of Contemporaries" and "House at 3 Ekaterinian Street". She has also organized events, compiled educational programs, held concert-lectures, and participated in various conferences, presenting musicological reports and studies, particularly on the life and creative path of Spendiaryan and his contemporaries in professional press, particularly in the journal "Musical Annenia", she has published the following articles: "The Meeting of Two Greats" (dedicated to A. Khachaturian) and "Gevorg Budaghyan - 110" (dedicated to G. Budaghyan's 110th birth anniversary). Among her articles published in the monthly magazine "Musician" are the following: "The Operas of Annenian Composers Inspired by Tumanyan's Lyricism", "Alexander Spendiaryan's Almost", "Vardan Achemyan's The Death of Kikos", "Imageiy in Spendiaryan's Works" and others, along with numerous articles covering the museum's activities published in the journal "Actual Art". On December 14-16, 2021, she participated in the scientific conference "Spendiaryan-150", jointly organized by the Art Institute of NAS RA, the Spendiaryan House-Museum, and the Composers' Union of Annenia, where she presented a paper titled "The Magical Power of the Conducting Baton", dedicated to Spendiaryan's conducting career. The paper was later published in the conference proceedings compiled by the Art Institute of NAS RA. In 2022, she compiled a bilingual (Annenian, English) collection with an accompanying CD titled "Alexander Spendiaryan: Illustrated Book". Throughout her career, she has attended various professional training sessions related to museum skills and has received certificates of expertise. In 2017, she was awarded a Certificate of Appreciation by the Ministry of Culture of Annenia for her long-tenn work.

Об авторе: АСТХИК ЛЕОНИДОВНА АРУТЮНЯН (род. 18.06.1983, Гюмри). Окончила: музыковедческий факультет Ереванской государственной консерватории имени Комитаса (2005), аспирантуру ЕГК (рук. Проф.А.А.Сарьян). Работала в Доме-музее АтеКсандра Спендиаряна заведующей отделом выставок (с 2005), затем старшим научным сотрудником, с 2009 года по настоящее время - главный хранитель фондов. Организовывала мероприятия, образовательные программы, концерты-лекции, выступала на различных конференциях, представляла музыковедческие доклады и исследования, в частности, связанные с жизнью и творчеством Спендиаряна и его современников. Автор статей: в журнале "Музыкальная Армения" - "Посвящается А. Хачатуряну", "Геворг Будагян-110", в газете Еражинип - "Оперы армянских композиторов, вдохновленные лирикой Туманяна", "Алмаст" Александра Спендиаряна, "Смерть Кик оса" Вардана Аджемяна' и др. статей, которые освещают деятельность музея. Изданные статьи - журнал "Актуальное искусство". 14-16 декабря 2021 г. Принимала участие в научном семинаре "Спендиарян-150", организованном совместно с Институтом искусств НАН РА, Домом-музеем Спендиаряна и Союзом композиторов Армении Научный доклад посвящен дирижерской деятельности Спендиаряна ("Магическая сила дирижерской палочки"), Институтом искусств НАН РА опубликован в материалах конференции. Выпустила двуязычный (арм., англ.) сборник компакт-дисков "АтеКсандр Спендиарян"(2022). Принимала участие в начальных тренингах по навыкам музейного дела, получила профессиональные сертификаты (2017). За многолетний труд награждена Почетной грамотой Министерства культуры РА.